

Հաստատում եմ

Տնօրեն՝

01.09.2022թ



Ստուգված է
Միջին դպրոցի ուս. աշխ
գծով տնօրենի տեղակալ՝
Մ. Բաբայան

Երևանի Խ. Արուվյանի անվան ՀՊՄՀ-ի
թ. 57 հիմնական դպրոց

2022-2023 ուստարի
«Մաթեմատիկա» առարկայի
Թեմատիկ պլանավորում

5-րդ դասարան
Ուսուցիչներ՝ Մարիամ Գրիգորյան, Սիրանուշ Խաչատրյան

ՀԴՄՔ հիմնական դպրոց Ուսուցիչ՝ Գրիգորյան Մարիամ

2022-2023ուս. տարի

Մաթեմատիկա 5-րդ

170 ժամ, շաբաթական՝ 5 ժամ

Մաթեմատիկա 5, Բ.Նահապետյան, Ա.Աբրահամյան Մանմար 2019թ.

Դաս	Թեմա	Էջը դասագրքում	Ժամ	Վերջնարդյունքները
ԳՆՈՒՆ 1 ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐ ԵՎ ՉՐՈՒ (14 ժամ)				
Նպատակը. Համակարգել և զարգացնել նախորդ դասարաններում ձեռք բերած գիտելիքները՝ բնական թվերի, նրանց հատկությունների վերաբերյալ:				
1	Թվանշաններ	Էջ 6-9	2	Գաղափար կազմել թվի և թվանշանի մասին, կարողանալ գրել բնական թիվը թվանշաններով, կրկնակալեն „Բնական թվերի շարք“, հասկացությունը:
2	Թվերի գրառումը	Էջ 10-13	2	Գաղափար կազմել թվի մասին, կարողանալ բնական թվերը գրել բառերով: Կմեկնաբանվի և կուսուցանվի թվերի դիրքային գրառումը, դրա իմաստը, կարևորությունը:
3	Կարգեր, կարգային միավորներ	Էջ 14-16	1	Կծանոթանան բնական թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով ներկայացմանը, կկարողանան տարանջատել կարգերն ու կարգային միավորները:
4	Թվերի ընթերցումը	Էջ 17-19	2	Գաղափար կազմել բնական թվի մասին, կարողանալ բնական թվերը գրել բառերով և կարդալ՝ ըստ դասերի կարդալու հմտության զարգացում:
5	Հաշիվ և թիվ.բնական թվեր	Էջ 20-21	1	Գաղափար կազմել բնական թվի մասին, տարանջատել թիվը և համրանքը, հասկանալ, որ ամենամեծ բնական թիվ չկա՝ քանակով ամենամեծ թվի չգոյության մասին ծանոթացում:
6	Բնական թվերի համեմատումը նրանց գրառման հիման վրա	Էջ 22-24	1	Կարողանալ համեմատել երկու բնական թվեր, տրված բնական թվերը դասավորել աճման կամ նվազման կարգով, կամրապնդվի դիրքային գրառման մասին ունեցած գիտելիքները:
7	Մեկը և զրոն յուրահատուկ թվեր են	Էջ 25-28	1	Կմեկնաբանվի զրոյի և մեկի յուրահատուկ լինելը, որ ի տարբերություն մյուս բնական թվերի՝ այս երկու թվերը չեն

				ներկայացվում որպես մեկերի գումար, կիմանան մեկի և զրոյի հատկությունները:
8	Մեկը և զրոն մաթեմատիկայի „Աղյուսիկներ“, են. Թվի հասկացությունը հին աշխարհի մտածողների մոտ	Էջ 29-31	1	Գործնական առաջադրանքների միջոցով զարգացնել աշակերտների մաթեմատիկական մտածողությունը, կողմնորոշվելու, դատողություններ կատարելու կարողությունը:
	Խնդիրների լուծում		2	Գործնական առաջադրանքների միջոցով զարգացնել աշակերտների մաթեմատիկական մտածողությունը, կողմնորոշվելու, դատողություններ կատարելու կարողությունը:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 1		1	
ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐՈՎ (31 ժամ) Նպատակը. Համակարգել և զարգացնել նախորդ դասարաններում ձեռք բերած գիտելիքները բնական թվերի հետ թվաբանական գործողությունների ,դրանց հատկությունների վերաբերյալ:				
9	Բնական թվերի գումարումը. գումարման տեղափոխական օրենքը	Էջ 32-33	2	Կսովորեն մաթեմատիկական լեզվով ճիշտ ձևակերպել գումար գործողությունը, տարբերել նրա բաղադրիչները, տեղափոխական օրենքը և նրա հիմնավորումը, իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանալ հատկությունները օգտագործել հաշվումներ կատարելիս:
10	Գումարման զուգորդական օրենքը	Էջ 34-36	1	Կարողանալ բնական թվերի հետ կատարել գումարման գործողությունը, կիրառել տեղափոխական և զուգորդական օրենքները, կմշակվի հմտություն այդ օրենքի կիրառման վերաբերյալ:
11	Բնական թվերի բազմապատկումը	Էջ 37-39	1	Կարողանալ բազմապատկել բնական թվերը, հիմնավորել բազմապատկման աղյուսակը, իմանալ բաղադրիչները:
12	Բազմապատկման տեղափոխական օրենքը	Էջ 39-42	1	Կարողանալ բազմապատկել բնական թվերը, կիրառել բազմապատկման տեղափոխական օրենքը, իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանալ հատկությունները օգտագործել հաշվումներ կատարելիս: Իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների նշանային ձևակերպումը և ձևավորել հմտություններ այդ օրենքի կիրառման վերաբերյալ:
13	Բազմապատկման զուգորդական օրենքը	Էջ 43-45	1	Կարողանալ բազմապատկել բնական թվերը, կիրառել բազմապատկման զուգորդական օրենքը, կհիմնավորեն այն, իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանալ հատկությունները օգտագործել հաշվումներ կատարելիս:

14	Բազմապատկման բաշխական օրենքը գումարման նկատմամբ	Էջ 45-47	2	Կարողանալ հիմնավորել բազմապատկման բաշխական օրենքը գումարման նկատմամբ, այն կիրառել, կըմբռնեն փակագծերի օգտագործման անհրաժեշտությունը գումարում և բազմապատկում պարունակող թվային արտահայտություններում:
15	Բնական թվերի գումարման հաշվեկանոնը և նրա բացատրությունը	Էջ 48-51	2	Կարողանալ թվաբանական գործողություններ կատարել բնական թվերի հետ, անվանարկել գործողությունների բաղադրիչները, կգտնեն, հայտնի բաղադրիչների միջոցով, երրորդ:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 2		1	
16	Կարգային միավորների բազմապատկումը	Էջ 51-53	2	Կիմանան կարգային միավորի ներկայացումը համապատասխան քանակով 10-երի արտադրյալի տեսքով, կարգային միավորների բազմապատկման և բնական թվի՝ կարգային միավորով բազմապատկման կանոնները: Կմշակվի կարողություն և այդ օրենքի կիրառման համար:
17	Բազմապատկման հաշվեկանոնը և նրա բացատրությունը	Էջ 53-56	2	Կսովորեն բնական թվերի բազմապատկման հաշվեկանոնը և նրա բացատրությունը՝ արտադրիչները կարգային գումարելիների գումարի տեսքով ներկայացնելու միջոցով, կգտնեն, հայտնի բաղադրիչների միջոցով, երրորդ:
18	Բնական թվերի հանումը	Էջ 57-59	2	Կարողանալ հանման գործողություն կատարել բնական թվերի հետ, տիրապետել նվազելիի և հանելիի հասկացություններին:
19	Չանման հաշվեկանոնը և նրա բացատրությունը	Էջ 60-62	2	Կսովորեն բնական թվերի հանման հաշվեկանոնը և նրա բացատրությունը, զարգացնել բնական թվերի հանում կատարելու գործողության կարողություններն ու հմտությունները, թվաբանական հայտնի երկու բաղադրիչներով երրորդի գտնելու կարողությունը, կգիտակցեն հանման աղյուսակի իմացության կարևորությունը՝ հանման հաշվեկանոնի կիրառման համար:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 3		1	
20	Բնական թվերի բաժանումը	Էջ 63-65	1	Կիմանան բաժանման՝ բազմապատկման միջոցով ձևակերպվող սահմանումը, կիմանան գործողության բաղադրիչները, նախորդ դասարաններում ձեռք բերած գիտելիքների կանոնակարգում կկատարեն, կկատարեն ոչ մեծ թվերի բաժանում:
21	Մնացորդով բաժանում	Էջ 66-68	2	Կսովորեն բաժանելին բաժանարարի, թերի քանորդի և մնացորդի միջոցով գտնելու եղանակը, կմշակվի մնացորդով բաժանում կատարելու հմտություն:

22	Բաժանման հատկությունները	Էջ 68-70	2	Կիմանան բաժանման հատկությունները՝ կապված թվերի գումարի և արտադրյալի բաժանելիության հետ, կկարողանան ձևակերպել այդ հատկությունները, ինչպես նաև կիրառել դրանք, զարգացնել գործողություններում հայտնի երկու բաղադրիչների միջոցով երրորդի գտնելու հմտություն և հաշվումներ կատարելիս:
23	Բաժանման հաշվեկանոնը և նրա բացատրությունը	Էջ 70-73	2	Կսովորեն բնական թվերի բաժանման հաշվեկանոնը և նրա բացատրությունը, զարգացնել բնական թվերի բաժանում կատարելու գործողության կարողություններն ու հմտությունները, գործողության հայտնի երկու բաղադրիչներով երրորդի գտնելու կարողությունը, կգիտակցեն բաժանման աղյուսակի իմացության կարևորությունը՝ բաժանման հաշվեկանոնի կիրառման համար:
24	Թվային արտահայտություն	Էջ 74-77	2	Կիմանան թվային արտահայտության և նրա արժեքի սահմանումը, կկարողանան պարզեցնել թվային արտահայտությունները և հաշվել նրանց արժեքները:
25	Մաթեմատիկան միջնադարյան Հայաստանում	Էջ 78-80	1	Նյութի ամփոփում, ծանոթացում միջնադարյան Հայաստանում մաթեմատիկայի բնագավառում ունեցած հաջողություններին, ձեռքբերումներին:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 4		1	
ԳԼՈՒԽ 3 ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄ (32 ժամ)				
Նպատակը՝ Մեծությունների և նրանց չափման միավորների մասին գիտելիքների ամրապնդումը, պարզագույն երկրաչափական պատկերների, մարմինների մասին պատկերացումների ընդլայնումը և կիրառման հմտությունների զարգացումը				
26	Չափման միավորներ	Էջ 81-83	2	Կկրկեն և կիմանան զանգվածի, ժամանակի, արագության չափման հիմնական միավորները, ինչպես նաև չափման միավորների հարաբերակցությունները՝ կարողանալ չափումներ կատարել, գրանցել դրանց արդյունքները և այն արտահայտել չափման տարբեր միավորներով: Մեծության չափման համար ընտրել հարմար գործիք: Ձևավորել պատկերացումներ մեծությունների չափման միավորների անհրաժեշտության, մեծությունների Էտալոնների:
27	Հատված և նրա երկարությունը	Էջ 84-86	2	Կսովորեն հատվածն ընկալել որպես առարկաների այնպիսի երկրաչափական պատկերում, որն արտացոլում է միայն նրանց երկարությունը, համեմատել առարկաները ըստ նրանց

				երկարությունների, կիմանան, որ երկու կետերի ամենամոտ հեռավորությունը դրանք միացնող ուղիղ գիծն է:
28	ճառագայթ, ուղիղ, հարթություն	Էջ 86-90	2	ճանաչել և կարողանալ գծել, ճառագայթը, ուղիղը և հարթությունը, կարողանալ գծել հատվող, զուգահեռ, փոխուղղահայաց ուղիղներ,
29	Սանդղակներ և կոորդինատային ճառագայթ	Էջ 91-93	2	Իմանան, թե ի՞նչ է սանդղակը, կընկալեն կոորդինատային ուղիղը որպես մի ուղղությամբ անվերջ սանդղակ, կձևավորվի կոորդինատային ճառագայթի, դրա վրա բնական թվերի պատկերման և համեմատման նախնական պատկերացումներ, կիմանան ի՞նչ է միավոր հատվածը, կետի կոորդինատը
	Գործնական աշխատանք		1	
30	Շրջանագիծ և շրջան	Էջ 94-96	3	ճանաչել երկրաչափական պատկերները՝ շրջանագիծը և շրջանը, շրջանագիծը որպես կոր գծի հաճախ հանդիպող տեսակ, իսկ շրջանը՝ որպես հարթության մաս, որը սահմանափակված է շրջանագծով:
31	Անկյունները և նրանց չափումը	Էջ 97-100	2	Կիմանան անկյան սահմանումը, կնշեն անկյան բաղկացուցիչները՝ գագաթ, կողմ, անկյան տեսակները, սովորել անկյան չափման միավորներ՝ րոպե, վայրկյան, կարողանալ անկյունաչափով կառուցել տրված մեծության անկյուն:
32	Բեկյալ գծեր և բազմանկյուններ	Էջ 101-105	2	Կիմանան բեկյալ գծի և նրա երկարության սահմանումը, ինչպես նաև բազմանկյան և նրա պարագծի սահմանումը, ճանաչել երկրաչափական պատկերը՝ բեկյալ գիծը, բազմանկյունը:
33	Ուղղանկյան մակերեսը	Էջ 106-108	2	Կիմանան մակերեսի հիմնական հատկությունը, մակերեսի չափման միավորները, նրանց կրճատ գրառումները և այդ միավորների հարաբերակցությունը, կկարողանան հաշվել ուղղանկյան մակերեսը, ինչպես նաև մակերեսի չափման միավորներն արտահայտել մեկը մյուսով, մասերի բաժանելու միջոցով հաշվել պատկերի մակերեսը:
34	Ուղղանկյունանիստ	Էջ 109-111	2	Գաղափար կկազմեն ուղղանկյունանիստ մարմնի մասին. Նիստ, կող, գագաթ, մակերևույթի մակերես, չափումներ, : Կիմանան խորանարդ սահմանումը:
35	Ճավալ: Ուղղանկյունանիստի ծավալ	Էջ 112-115	2	Կըմբռնեն ծավալի և տարողության գաղափարները: Կիմանան ծավալի հիմնական հատկությունը, ծավալի

				չափման միավորները, նրանց կրճատ գրառումները և այդ միավորների հարաբերակցությունը, կկարողանան հաշվել ուղղանկյունանիստի ծավալը, ինչպես նաև ծավալի չափման միավորներն արտահայտել մեկը մյուսով, մասերի բաժանելու միջոցով հաշվել մարմնի ծավալը:
36	Երկրաչափությունը և ճարտարապետությունը	Էջ 116-117	1	
	Թեմատիկ գրավոր աշխատանք 5		1	
	Կրկնություն		8	
ԳԼՈՒԽ 4 ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԲԱԺԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ (24 ժամ)				
Նպատակը՝ Թվերի բաժանելիության հայտանիշների մասին գիտելիքների ամրապնդումն ու ընդլայնումը, դրանց կիրառման հմտությունների ձևավորումը: Բաժանարարի, բազմապատիկի մասին գիտելիքների ձևավորում, խնդիրներում դրանց կիրառման հմտությունների զարգացումը:				
37	Բնական թվերի բազմապատիկներն ու բաժանարարները	Էջ 118-120	2	Կիմանան բնական թվերի բաժանարարների և բազմապատիկների սահմանումները, ինչպես կարելի է գտնել տվյալ թվի բազմապատիկները, կիմանան, որ տվյալ թվի բազմապատիկների քանակն անսահմանափակ է, իսկ բաժանարարները՝ սահմանափակ, կարողանան գտնել ոչ մեծ թվերի բոլոր բաժանարարները:
38	Բաժանելիության հայտանիշներ. թվերի բաժանելիությունը 10 –ի, 5 –ի և 2 –ի	Էջ 120-123	2	Կարողանալ որոշել բնական թվի գույգ կամ կենտ լինելը, կիմանան և կկիրառեն թվերի 10-ի, 5-ի և 2-ի բաժանելիության հայտանիշները
39	Բաժանելիության հայտանիշներ. թվերի բաժանելիությունը 3-ի, 9-ի, 4-ի	Էջ 124-126	2	Կիմանան 3-ի, 4-ի, 9-ի բաժանելիության հայտանիշները, կկարողանան կիրառել այդ հայտանիշները՝ բաժանարարներ գտնելիս:
40	Ամենամեծ ընդհանուր բաժանարար	Էջ 127-129	2	Կիմանան թվերի ընդհանուր բաժանարարի և ամենամեծ ընդհանուր բաժանարարի սահմանումները, իմանալ ամենամեծ ընդհանուր բաժանարարի հասկացությունը, կարողանալ գտնել երկու երկնիշ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը: Ճարունակել բնական թվերի

				հետագա ուսումնասիրությունը՝ բաժանելիության տեսանկյունից:
41	Ամենափոքր ընդհանուր բազմապատիկ	Էջ 130-133	3	Գաղափար ունենալ երկու թվերի ընդհանուր բազմապատիկի մասին, գտնել այն, իմանալ ամենափոքր ընդհանուր բազմապատիկի հասկացությունը: Կարողանալ գտնել երկու երկնիշ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը
	Խնդիրների լուծում		2	
	Թեմատիկ գրավոր աշխատանք 6		1	
42	Պարզ և բաղադրյալ թվեր	Էջ 134-136	2	Կսահմանեն պարզ և բաղադրյալ թվեր, կկարողանալ ստուգել բնական թվի պարզ կամ բաղադրյալ լինելը: Իմանալ 20 – ից փոքր պարզ թվերը: Կձանոթանան պարզ թվեր գտնելու Էրատոսթենեսի եղանակին: Կկարողանան պարզ թվերի աղյուսակն օգտագործել խնդիրներ լուծելիս:
43	Բաղադրյալ թվի վերլուծումը պարզ արտադրիչների	Էջ 137-140	2	Կարողանալ բնական թիվը ներկայացնել պարզ արտադրիչների արտադրյալի տեսքով, գաղափար կունենան փոխադարձ պարզ թվերի մասին
44	Երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելը վերլուծելով պարզ արտադրիչների	Էջ 141-144	4	Կիմանան ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելու ալգորիթմը, տեսական գիտելիքները կկիրառվեն գործնական բնույթի խնդիրներ լուծելիս
45	Պատմություններ թվերի մասին	Էջ 145-148	1	Գաղափար կկազմեն բարեկամ, բազմանկյուն թվերի մասին: Կնախապատրաստվեն թեմատիկ գրավոր աշխատանքի
	Թեմատիկ գրավոր աշխատանք 7		1	

ԳԼՈՒԽ 5 Սովորական կոտորակներ (39 ժամ)

Նպատակ՝ Սովորական կոտորակի, նրա հատկությունների մասին գիտելիքների, կոտորակների հետ գործողություններ կատարելու հմտությունների ձևավորումը:
 Թվաբանական միջին հասկացության մասին գիտելիքների ձևավորումը, առօրյա կյանքում դրա կիրառման դեպքերի հետ ծանոթացումը

46	Բաժիններ	Էջ 149-152	2	Կարողանալ գրել և կարդալ բաժինները, կիմանան՝ հայտարարին հավասար քանակով նույնատեսակ բաժինների գումարը հավասար է 1-ի, ամբողջի տրված մասը:
47	Բաժինների գումարումը. սովորական կոտորակ	Էջ 153-156	2	Կիմանան բաժինների գումարման կանոնը և սովորական կոտորակի սահմանումը, կարողանալ գրել կարդալ սովորական կոտորակը, կհիմնավորեն սովորական կոտորակի համարիչի և հայտարարի սահմանումները, կիմանան, որ բնական թվերը սովորական կոտորակների մասնավոր դեպքերն են, կկարողանան գումարել նույն հայտարարն ունեցող բաժինները:
48	Սովորական կոտորակների հիմնական հատկությունները	Էջ 157-159	2	Կարողանալ պարզ դեպքերում կրճատել կոտորակը, գտնել տրվածին հավասար կոտորակ, իմանալ սովորական կոտորակների հավասարությունը, սովորական կոտորակների հիմնական հատկությունները:
49	Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը	Էջ 160-163	4	Կարողանալ կոտորակները բերել ընդհանուր հայտարարի՝ օգտվելով կոտորակի հիմնական հատկությունից, կներմուծվի լրացուցիչ արտադրիչի գաղափարը, գտնել կոտորակների ամենափոքր ընդհանուր հայտարարը:
50	Կոտորակների գումարում	Էջ 164-166	4	Կկարողանան կոտորակները գումարել՝ բերելով ամենափոքր ընդհանուր հայտարարի:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 8		1	
51	Կոտորակների համեմատումը	Էջ 167-170	2	Կարողանալ համեմատել կոտորակները: Իմանալ սովորական կոտորակների համեմատման տարբեր եղանակներ և կարողանալ դրանք կիրառել: Կարողանալ համեմատել կոտորակները: Իմանալ սովորական

				կոտորակների համեմատման տարբեր եղանակներ և կարողանալ դրանք կիրառել:
52	Կոտորակների հանումը	Էջ 171-173	4	Կիմանան կոտորակների հանման հաշվեկանոնը և կկարողանան հանել կոտորակները, կկատարեն ինքնուրույն աշխատանք, արմատավորել սովորական կոտորակների հետ գործողությունների վերաբերյալ գիտելիքները:
53	Կոտորակների բազմապատկումը	Էջ 174-177	4	Կիմանան կոտորակների բազմապատկման հաշվեկանոնը, կկարողանան բազմապատկել կոտորակները, գործնականում կիրառելու հմտության ձևավորում:
54	Թվաբանական օրենքները կոտորակների գումարման համար	Էջ 178-181	4	Կարողանալ թվաբանական գործողություններ կատարել կոտորակների հետ: Իմանալ սովորական կոտորակների հետ թվաբանական գործողությունների հատկությունները և կարողանալ պարզ դեպքերում կիրառել: Իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանալ հատկությունները օգտագործել հաշվումներ կատարելիս:
55	Թվաբանական օրենքները կոտորակների բազմապատկման համար	Էջ 182-185	4	Կարողանալ թվաբանական գործողություններ կատարել կոտորակների հետ: Իմանալ սովորական կոտորակների հետ թվաբանական գործողությունների հատկությունները և կարողանալ պարզ դեպքերում կիրառել: Իմանալ թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանալ հատկությունները օգտագործել հաշվումներ կատարելիս:

56	Կոտորակների բաժանումը	Էջ 186-189	4	Կիմանան կոտորակների բաժանման կանոնը և նրա բացատրությունը, կկարողանան տեսական գիտելիքներն օգտագործել գործնական բնույթի խնդիրներում:
57	Երաժշտությունը և թվերը. Պյուրագորասի ուլորտների մեղեդին	Էջ 190-191	1	Պատմական ակունքների հետ ծանոթացում
	Թեմատիկ գրավոր աշխատանք 9		1	
ԳԼՈՒԽ 6 Խառը թվեր (30 ժամ)				
	Նպատակը՝ խառը թիվ հասկացության հետ ծանոթացումը, խառը թվերը կարդալու, գրելու, համեմատելու, խառը թվերով գործողություններ կատարելու հմտությունների ձևավորումը			
58	խառը թվեր	Էջ 192-194	4	Կսահմանեն խառը թիվ հասկացությունը, կճանաչեն դրանք, կկարողանան անկանոն կոտորակը դարձնել խառը թիվ և հակառակը, առանձնացնել անկանոն կոտորակի ամբողջ մասը և այն արտահայտել սովորական կոտորակով:
59	խառը թվերի համեմատումը	Էջ 195-198	4	Կարողանալ համեմատել խառը թվերը, ձևավորել հմտություններ և կարողություններ՝ խառը թվերը համեմատելու համար:
60	Թվաբանական գործողությունները խառը թվերով	Էջ 198-201	4	Կարողանալ խառը թվերով գործողություններ կատարել, խառը թվերի հետ թվաբանական գործողությունների հատկությունները ի մի բերել և կարողանալ պարզ դեպքերում կիրառել:
61	Մակերեսների և ծավալների հաշվումը և խառը թվերը	Էջ 202-207	4	Իմանալ երկրաչափական պատկերների մակերեսների և ծավալների հաշվման բանաձևերը, դրանք կիրառել հաշվումներում, որտեղ առկա են խառը թվեր:
	Գործնական աշխատանք 2		1	
62	Կոտորակային թվերը Հին աշխարհում	Էջ 208	1	
	Խնդիրների լուծում		4	
	Թեմատիկ գրավոր աշխատանք 10		1	

	Կրկնություն		7	
--	-------------	--	---	--